**Տ. Բագրատ քհն. Փարիշյան**
**Աշոտ Գ. Մանուչարյան**
ashot.manucharyan.1959@mail.ru
ORCID: 0009-0007-7783-8580

# ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐԸ.
## քահանայի օրագրից

Ամփոփում

Հոդվածի համահեղինակ Տեր Բագրատ Փարիշյանը 1989-1993 թթ.. եղել է հայ միջնադարյան ճարտարապետության գլուխգործոց Գանձասարի վանքի հոգևոր հովիվը: Այդ ընթացքում նա իր օրագրում ընդօրինակել է վանական համալիրի գրեթե բոլոր վիմական արձանագրությունները: Դրանց մեջ մոտ յոթ տասնյակ վիմագրեր տարբեր պատճառներով տեղ չեն գտել նախորդ ուսումնասիրողների աշխատություններում: Այս համեմատաբար նորահայտ արձանագրությունները համալրում են Գանձասարի վանքի հարուստ վիմագրական ժառանգությունը, ընդ որում, գոնե հրատարակված տարբերակով փրկվելով հավանական վանդալական ոչնչացումից:

Այս արձանագրությունները ոչ միայն կարևորագույն սկզբնաղբյուրներ են Գանձասարի նշանավոր վանքի, Հասան-Ջալալյան իշխանական տոհմի, այլև Հայոց պատմության համար:

**Բանալի բառեր** – Արցախ, Գանձասարի վանք, տաճար, եկեղեցի, գմբեթ, գավիթ, խաչքար, վիմագիր, փակագիր, տապանաքար:

**Father Bagrat priest Farishyan**
**Ashot G. Manucharyan**

## EPIGRAPHICAL NEWS OF THE GANDZASAR MONASTERY

from the Diary of a Priest

Abstract

Co-author of the article, Father Bagrat Farishyan, 1989-1993 years was the spiritual shepherd of the Gandzasar monastery, a masterpiece of Armenian medieval architecture in Artsakh. During this time, he copied almost all the inscriptions from the monastery complex into his diary. They contain about seven dozen lapidary inscriptions, which for various reasons were not included in the works of previous researchers. These relatively new inscriptions complement the rich epigraphic heritage of the Gandzasar monastery, while at least their published version preserves them from possible vandalistic destruction.

These inscriptions are important primary sources not only for the study of the famous Gandzasar monastery, the Artsakh princely family of Hasan-Jalalyans, but also for the history of Armenia.

**Key words -** Artsakh, Gandzasar monastery, temple, church, dome, porch, khachkar, lapidary inscription, tombstone.

**Отец Баграт Фаришян**
**Ашот Г. Манучарян**

## ЭПИГРАФИЧЕСКИЕ НОВОСТИ ГАНДЗАСАРСКОГО МОНАСТЫРЯ

из дневника священника

Соавтор статьи Отец Баграт Фаришян, в 1989-1993 гг. был духовным пастырем монастыря Гандзасар, шедевра армянской средневековой архитектуры в Арцахе. За это время он скопировал в свой дневник почти все надписи со стен, хачкаров и надгробий из монастырского комплекса. В них около семи десятков лапидарных надписей, которые по разным причинам не вошли в труды предыдущих исследователей. Эти сравнительно новые надписи до-

полняют богатое эпиграфическое наследие монастыря Гандзасар, и что важно, опубликованный материал возможно спасет их от вандалистского разрушения.

Эти надписи не только являются важными первоисточниками для изучения истории знаменитого монастыря Гандзасар, арцахского княжеского рода Гасан-Джалалянов, но и для истории Армении.

**Ключевые слова:** Арцах, Гандзасарский монастырь, храм, церковь, купол, притвор, хачкар, лапидарная надпись, надгробие.

## Մուտք

Արցախ աշխարհի հայկական միջնադարյան ճարտարապետության գլուխգործոց Գանձասարի վանքի վիմագրական հարուստ ժառանգությունն ամփոփված է Հովհաննես եպս. Շահխաթունյանցի (**Շահխաթունեանց Յովհ. եպս.**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. Բ, Ս. Էջմիածին, 1842), Սարգիս վրդ. Ջալալյանցի (**Ջալալեանց Ս. վրդ.**, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842), Մակար եպս. Բարխուդարյանցի (**Բարխուդարեանց Մ. եպս.**, Արցախ, Բագու, 1895), Հովսեփ Օրբելու (Գանձասարայ եւ Հաւոցպտկոյ արձանագրութիւնք, ժողովեաց եւ ի լոյս ածելոյ պատրաստեաց Յովսէփ Օրբէլի, Պետրոգրադ, 1919) աշխատություններում[1]: Ուշագրավ են նաև Բագրատ Ուլուբաբյանի (**Ուլուբաբյան Բ.**, Գանձասար, Եր., 1981), Միքայել վրդ. Աջապահյանի (**Աջապահյան Մ. վրդ.**, Նորահայտ արձանագրություններ և վիմագրական սրբագրումներ (Գանձասարի վանք), «Էջմիածին», 1990, Ը-Թ, էջ 54–57), Արտակ Մաղալյանի (**Магалян А.**, Правители Хачена. Княжеский род Хасан-Джалалянов в XVII-XIX веках, «Армянская генеалогия», II, Москва–Ереван, 2023, с. 12–32) աշխատությունները և «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի Արցախի պրակում (Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Եր., 1982 առկա նյութերը (այսուհետև՝ ԴՀՎ-5 և էջը), որոնցում ընդգրկված է շուրջ երկու հարյուր արձանագրություն:

[1] Նույնի ռուսերենը տե՛ս **Орбели И.**, Надписи Гандзасара и hАвоцптука (собрал и подготовил к печати канд. ист. наук Айк Акопян), Ер., 2016.

**Գանձասարի վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու նոր արձանագրությունները.**

1. **ԳՄԲԵԹ**, հյուսիսային կողմում, փակագիր, 1 տող.



ԴԱՎԻԹ ՎԱՐԴՊԵՏ։,,

2. **ԳՄԲԵԹ**, արևմտյան կողմում, 2 տող.



ՈՒ/ՍԴԱ ՄԵԼՔՈՆ։

**Ծանոթ.** Ուստա Մելքոնը 1851 թ. (Օստա Մելքոն ձևով) հիշատակվում է նաև գմբեթի թմբուկի հյուսիսարևելյան նիստին, արծվաքանդակից վերև (**Ուլուբաբյան**, 1981, 132)։

3. **ԳՄԲԵԹ**, 1 տող.



ՄԻՔԱՅԷԼՆ ԴԻՋԱԿԵՑԻ։

**Ծանոթ.** Ժամանակակից է Դաւիթ վարդպետին և ուստա Մելքոնին։

4. **ԳՄԲԵԹ**, 1 տող.



ՅԱԿՈԲ:

**Ծանոթ.** Յակոբ գրիչ հիշատակվում է վանքի միաբանական երրորդ խուցի ներսում, բուխարիկի կամարի կիսաշրջանի վրա և դրա աջ կողմում՝ 1758 թ. (**Ուլուբաբյան**, 1981, 153), ինչպես նաև երկիցս՝ Ս. Հովհաննես տաճարի հարավային պատի արևմտյան մասի 1796 թ. և 1779 թ. վիմագրերում (**Ուլուբաբյան**, 1981, 115-116, ԴՀՎ-5, 48):

5. **ՏԱՃԱՐ (Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ)**, հյուսիսային պատին, 3 տող.



ԵՄ՝ ԱՆԱՐԺ⌊Ա⌋ՆՍ Յ⌊Ո⌋Հ⌊Ա⌋ՆՆԷ⌊Ս / ԱԲԵՂ⌊Ա⌋Յ ԽԱՆՑՔԵՑԻ:

**Ծանոթ.** Խանցքը (Խանց, Խանձք) պատմական գյուղ է Արցախ աշխարհի Խաչեն գավառում, այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում (**Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, 1988, 655): Այդ գյուղից էր Աղվանից կաթողիկոս Պետրոս Դ. Խանձկեցին (1653-1675):

6. **ՏԱՃԱՐ (Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ)**, հյուսիսային պատին, 5 տող.



⌐ԿԱՄԱԻՆ¬ ԱՅ . ⌐ԵՍ¬ ՝ ՄՆ⌐Ո¬/Ն, ՈՐ⌐ԴԻ Դ¬ԻՏԻԱՆԱ, ՄԻ⌐ԱԲ/Ա¬ՆԵՑԱ ՄԲ ՈՒԽՏ⌐ԻՍ¬ , / ԵՒ ՍՈՔԱ ՏՎԻՆ ՀԱՄ/ ⌐Բ¬ԱՐՁՄԱՆ :Ա: (1) ՊԱՏԱՐ⌐ԱԳ¬ ...

**Ծանոթ.** Նվիրատվական արձանագրության հատված է, XIII–XIV դդ.: Նվիրատու Մնոն ինչ որ բան է ընծայել Գանձասարի վանքին, և միաբանները մեկ պատարագ են մատուցել Համբարձման տոնին: Սուրբ Համբարձման տոնը «Հայ առաքելական եկեղեցու Տերունի տոներից է. Հիսուս Քրիստոսի հարության օրվանից քառասուն օր հետո՝ հինգշաբթի օրը Հայ եկեղեցին տոնում է Հիսուսի երկինք համբարձվելու հիշատակը: Համբարձման տոնը Զատկի հետ 35 օր-վա շարժականություն ունի և նշվում է ապրիլի 30-ից մինչև հունիսի 3-ն ընկած ժամանակահատվածում» («Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, 2002, 532):

**7. ՏԱՃԱՐ (Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ)**, արևմտյան պատին, ներքուստ, 4 տող, բոլորգիր.



ԵՍ՝ ՄԷԼՔՈՒՄՍ / ԱՍՐՈՒԿԱՇԵ⌊Ն⌋Ց⌊Ի⌋, / ԵՍ՝ Խ⌊ՈՍՐՈ⌋ՎՍ ԾԱՐ⌊ԵՑԻ⌋:

**Ծանոթ.** Ասրուկաշենը նույն Ասրիկ գյուղն է, որը գտնվել է Արցախի Ծար-Վայկունիք գավառում (Քարվաճառի շրջանում), Ասրիկ գետակի հովտում, անտառապատ վայրում (**Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, 1986, 352):

**8. ՏԱՃԱՐ (Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ)**, արևելյան պատին, արտաքուստ, 2 տող.



ՅՕՍԷՓ / ⌈Ա⌉ ՅՍ Է ՏԱՃԱՐ ...

**Ծանոթ.** Արձանագրությունը մնացել է թերի: Ուշմիջնադարյան հիշատակագիր է:

**9. ՏԱՃԱՐ (Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ)**, արևելյան պատին, արտաքուստ, 3 տող, հիմնականում բոլորգիր.



ԵՄ՝ ՏԻՐԱՑՈՒ / ԲԱԽՇԻԻ / ՀԱՍԱՆ Ջ⌊Ա⌋ԼԱԼՈՎ:

**Ծանոթ.** Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցչի ուշմիջնադարյան հիշատակագրություն է:

## Բ) Գավթի նորամույծ արձանագրությունները

**10. ԳԱՎԻԹ**, հյուսիսային ճակատին, 3 տող.



Յ⌊ԻՇԱ⌋ՏԱԿ Է Տ̅Ր̅ ՆԵՐ/ՍԷՍԻ⌊Ն⌋,
ԹՎԻՆ / ⌈Ջ⌉ԽԴ (1495):

**Ծանոթ.** Տէր Ներսէսը Գանձասարի 1471–1495 թթ.. վիմագրերում հիշատակվում է վանքի առաջնորդ (ԴՀՎ–5, էջ 43, 44, 55, 56):

**11. ԳԱՎԻԹ**, հյուսիսային պատին, 3 տող.



⌈Կ⌉ԱՄԱԻՆ Ա̅Յ̅ . ԵՄ՝ ⌈Վ⌉ԱՆԱՀԱՅՐ / ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴ⌊Ա⌋Պ⌊ԵՏ⌋, / ՄԻՐՋԱՅ⌊Ի⌋ / ԱԻԳՆ⌊Ո⌋Ւ⌊ԹԵԱՄԲ⌋Ն ՆՈՐ⌊Ո⌋ Գ⌊ԵՑ⌋Ի ՁՊԱՐ⌊Ի⌋ՍՊՍ:

**Ծանոթ.** Սա այն Ներսեսն վարդապետն է, որը հիշվում է վանքի 1837 թ. և 1855 թ. վիմագրերում (**Ուլուբաբյան**, 1981, 152): Տաճարի

1754 թ. արձանագրությունում հիշատակվում է Միրզա պէկ (ԴՀՎ-5, էջ 48), որը, անշուշտ, Հասան-Ջալալյաններից է:

**12. ԳԱՎԻԹ**, հյուսիսային պատին, 1 տող.



⌊Թ⌋ԵՐՍԱՏ:

**13. ԳԱՎԻԹ**, հյուսիսային պատի արևմտյան մասում, ներքուստ, 5 տող.



ԿԱՄԱՒՆ ⌈Ա̅Յ̅. ԵՄ'ԳՐԻԳՈՐ⌉/ԻՍ ՔԱՀԱՆ⌈ԱՅՍ⌉, ՄԻԱԲԱՆԵ⌈ՑԱ Ս̅Բ̅ ՈՒԽՏ⌉ /ԻՍ, ԵՒ ՍՈՔԱ ⌈ԽՈՍՏԱՑԱՆ ՊԱՏԱՐԱԳ Ի⌉ / ՋԱՏԻԿՆ Ո ...

**14. ԳԱՎԻԹ**, հարավային պատին, ներքուստ, 1 տող.



ԽԱՉՍ ՄՈՒՐ⌈ԱԴԻՆ Է⌉:

**15. ԳԱՎԻԹ**, հարավային պատին, արտաքուստ, 3 տող.



ԵՄ' ՈՅ/ՀԱՆ/ԷՍ:

**16. ԳԱՎԻԹ**, արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ, 1 տող.






ԲԷԿ ⌊Ն⌋ԱՁԱՆԱ:

**17. ԳԱՎԻԹ**, հարավարևելյան պատին, հավասարաթև խաչաքանդակի ներքևում, 1 տող.



Խ⌊Ա⌋Չ⌊Ս⌋ ԽԱՆՈՒՄԻՆ Ա:

**Ծանոթ.** Խանում անունը ծագում է թուրքերենից, նշանակում է «տիկին, ազնվական կին» (**Աճառեան**, Բ, 1944, 462):

**18. ԳԱՎԻԹ**, ներքուստ, արևմտյան որմնամույթի խոյակից վեր, 2 տող.



Ն⌊Ե⌋ՐՍԷՍ՝ / ԾԱՌԱՅ Ա̅Յ̅ :

**Ծանոթ**. Ինչպես կանխավ նշել ենք, Գանձասարի արձանագրություններում 1471–1495 թթ.. վանքի առաջնորդ է հիշատակվում Տ. Ներսէս (ԴՀՎ–5, 43, 44, 55, 56), իսկ 1837 թ. և 1855 թ. վիմագրերում՝ Ներսէս վարդապետը, որը նորոգել է պարիսպը:

**19. ԳԱՎԹՈՒՄ**, տապանաքար, 4 տող.



ԱՅԵ Ս ԴԱՊԱՆ Խ/ԱՍՈՒՑ Տ̅Ր̅ ՄԷԼԻՔՍԷԹ⌊Ի⌋, ԹՎԻՆ / ՌՄ (1751):

**Ծանոթ.** Տապանագրի սկզբնաբառը պետք է լինի ԱՅՍ Է: Խասուց տոհմանունը ծագում է արաբերեն خاصّ(խասս=հատուկ) բառից (**Баранов**, 1977, 222):

**20. ԳԱՎԻԹ**, խաչաքանդակ քար, 2տող.



† ԽԱՉՍ ⌊Վ⌋ԱՐԱՆԴԱՑ / ՀՈՒՆԻՆ Է:

### Գ) Բակի և օժանդակ շինությունների նորաբեր արձանագրությունները

**21. ՎԵՀԱՐԱՆ**, պատին, ներքուստ, փակագիր.



ՎՐԹԱՆԷՍ ՎԱՐ⌊ԴԱՊԵՏ⌋:

**22. ՎԵՀԱՐԱՆ**, հինգերորդ խուցի պատին, 1 տող.



ՇԱԻՂԱՑ:

**Ծանոթ.** Այսինքն՝ շավիղների, նեղ արահետների:

**23. ԴՊՐԱՏՈՒՆ**, ճակատին, 8 տող.



ՇԻՆՈՒԹԻՒՆՔ ԵՐԿՑԱՐԿՆ / ԱՇԽ⌊Ա⌋ՏՈՒԹԻՒՆ ԱՆՏՕՆ / ՎԱՐԴԱՊԵ⌊Տ⌋Ի, ԱՄԷՆ: ՅԻՇԱ/ՏԱԿ ԱՆՋՆՋԷԼԻ: ՏԷՍ/⌊Ն⌋ՈՂՔ ՅԻՇԷՆ: ԱՇ̅ / ՈՂՈՐՄԻ: Ի ՀԱՅՐԱՊԵ/ՏՈՒԹԵ⌊Ա⌋Ն Տ. ՄԿՐՏՉԻ, / 1898 ԱՄԻ:

**Ծանոթ.** Հիշատակվող հայրապետն Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցին է՝ Խրիմյան Հայրիկը (1892–1907):

**24. ԴՊՐԱՏՈՒՆ**, դրսի դռան մուտքի ձախ կողմում, 9 տող.



⌈ԵՍ⌉՝ ԴՈ⌈Լ ԱՑ, /⌉ԻՄ ՈՑ⌈ԺԱԻ Կ⌉ԱՆԳ/ՆԵՑԻ / ՋՍԱ ԲԱՐԵ/ԽԱԻՍ / ԱՌ ՏՐ / ՔՍ : Ո⌈Ղ⌉(1241):

**Ծանոթ.** Նշանակում է դպրատան հին շենքը կառուցել է Հասան Ջալալ Դոլան (1214–1261): Շենքի 1898 թ. կառուցման ժամանակ վիմագրի այդ հատվածը պահպանվել է:

**25. ՍԵՂԱՆԱՏՈՒՆ**, հարավային պատի արևմտյան անկյան մոտ, փակագիր, 1 տող.



ՍԻԼԽԱԹ:

**Ծանոթ.** Այս և հաջորդ փակագրերի գրչապատկերներն իր գրքում առանց վերծանման ներկայացրել է Բ. Ուլուբաբյանը (**Ուլուբաբյան**, 1981, 151):

**26. ՍԵՂԱՆԱՏՈՒՆ**, երկրորդ խուցի դռան ձախ կողմի քարի վրա, փակագիր, 1 տող.



ՍԷԹՆ:

**27. ԲԱԿ**, խաչքարի ստորին մաս, 4 տող.




⌈ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ
ՎԱ⌉/ԽՏԱՆԳԱ ԵՒ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒ/ԹԵ⌊ԱՄԲ⌋ ՏՐ ՎԱՐԴԱՆԱՅ, ԵՍ՝ ՅՈՎԱՍԱԲ ՄԻ/ԱԿԵ⌊Ա⌋Ց, ԿԱՆԳՆԵՑԻ ՋԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹ⌊ԻՒՆ⌋ / ՀՈԳՈ ԻՄՈՅ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ, ՅԱՂԱ⌈ԹՍ ՅԻՇԵՑԷՔ⌉:

**Ծանոթ.** Անչափ արժեքավոր արձանագրություն է՝ Արցախ աշխարհի հզորագույն իշխան Հասան Ջալալ Դոլայի (1214–1261) հայր, Խաչենի տեր Վախտանգ Տանգիկի (մահ. 1214 թ.) հիշատակությամբ: Համոզված ենք, որ խաչքարի այս հատվածը Գանձասարի վանք բերվել է 1990-ականն թթ.. սկզբներին, այլապես այն չէր սպրդի նախորդ ուսումնասիրողների ուշադրությունից:

Գանձասարի վանքի առաջնորդ Տ. Վարդանը հիշատակվում է տեղի 1240 թ. և 1244 թ. արձանագրություններում (ԴՀՎ-5, էջ 38, 70):

Զարգացած միջնադարում (IX–XIV դդ.) միայնակյաց ճգնավորները, որպես կանոն, ճգնում էին վանքերի մոտակա ճգնարաններում և միայն կիրակի և տոն օրերին էին այցելում մենաստան՝ մասնակցելու ս. պատարագի և հաղորդություն ստանալու:

**28. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, վանքի բակում, ռուսերեն, 4 տող.



ДОКТОР МЕДИЦИНЫ БЕРЛИНСКОГО / УНИВЕРСИТЕТА ГАСАН-ДЖАЛАЛЕАНЦ / НЕРСЭС АЛАХВЕРДИБЕКОВИЧ, 1886-1911.

**29. ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ**, բակում, ետնի մասում, 1 տող.



Մ⌊Ա⌋ՀՏ⌊ԵՍԻ⌋ Ա⌊ԻԱ⌋ԳԻ⌊Ն Է⌋:

**Ծանոթ.** Երուսաղեմի ուխտավորն ուխտագնացություն է կատարել նաև Գանձասարի վանք:

**30.ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ**, վանքից 100-150 մ հեռու, ցանկապատի տակ, արևելյան կողմում, երկու տող.



ԳՐԻ⌈ԳՈՐ⌉⌈ԿԱՋ⌈ՄՈՂ⌉:

**Ծանոթ.** Խաչքարագործ վարպետի հիշատակություն է:

**Դ) Վանքից հարավ գտնվող գերեզմանատան Հասան-Ջալալյանների տոհմական տապանագրությունները**

**31. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 3 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆԸ ԱՂՊԱՍՏԻ՝ ՈՐԴԻ ՎԵԼԻ/ՋԱՆԻՆ, ԵՂԲՕՐ ԵՐԵՄԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, / Ի ՌՃԼԵ (1686) ԹՈՒԻՆ:

**Ծանոթ.** Աղվանից Երեմիա Բ. Հասան-Ջալալյանց կաթողիկոսը գահակալել է 1676-1700 թթ..: Նրա շիրիմը գտնվում է վանքի գավթում:

**32.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 3 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԵ/ԼԻՔ ՊԷԿԻ ՈՐԴՈՅ ԲԷԿ/Զ⌊Ա⌋ՏՈՒՆ, Թ⌊ՎԻՆ⌋ ՌՄ (1751):

**Ծանոթ.** Բ. Ուլուբաբյանը Փարիզադի հոր անունը վերծանել է ԴԱՒԻԹ, իսկ ՍԱ ԷՐ ԹՈՌՆ բառակապակցության փոխարեն՝ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ: Թվականը նա վերծանել է ՝ ՌՄԻԷ՝ 1778 ( **Ուլուբաբյան**, 1981, 162):

**33.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԻԿԻՆ / ԳՈՀԱՐԻ՝ ԿՈՂԱԿԻՑ / ԱԼԱՀՎԵՐԴ⌊Ի⌋ԲԷԳ / ՀԱՍԱՆ–ՋԱԼԱԼԵ⌊Ա⌋ՆՑԻ: / ՎԱԽՃ⌊ԱՆԵՑԱԻ⌋ 1882 Թ., ՀԱՍ⌊ԱԿԱԻ⌋ 39 ԱՄԱՅ:

**34. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԳ⌊Ի⌋ՍՏ ԳՈՒԼՈՒՍՏԻՆ՝ ԿԵՆԱ⌈ԿԻ/Ց⌉ ԱԼՎԷՐԴԻՆ: ՍԱ ԷՐ ՄԱՅՐ ԵՍԱԻ / ⌈Վ⌉ԱՐԴԱ⌊Պ⌋ԵՏԻՆ ԵՒ ԴՈՒՍՏԸՐ ՓԵՐՈՍ ՔՅ⌊Ո⌋Խ⌊Ի⌋ ԻՆ, ՌՄԻՁ (1777) ԹՎԻՆ:

**35.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 8 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՋԱՎԱՀԻ/ՐԻՆ՝ ԿՆՈՋԻՆ ՆԱՀԱՌ Ա/ՊՐԵՍԻՆ, ԹՈՌԸՆ Է ԱՊՐԵՍ ՄԷԼԻՔԲԷԿԻՆ՝ ՅԱԶԳԷՆ / ՋԱԼԱԼ ՄԵԾ ԻՇԽԱՆԻՆ, ԹՈՒԻՆ Ռ (1000) ԵՒ Կ (60) =1611... /... ՈՒԹՍՈՒՆ / ԹԻՒՆ ՍՈՐԻՆ:

**Ծանոթ.** Նահառ անսովոր բառը, կարծում ենք, ծագում է արաբերեն «նիհր» نحر ձևից, որը նշանակում է «գիտուն» (**Баранов**, 1977, 788):

**36.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 5 տող.



ԱՅՍՄ ՏԱՊԱՆԻ ՀԱՆԳՉԻ / ՄԱՐՄԻՆ ՄԷԼԻՔ ԱԼԼԱՀՎԵՐԴՏՈ/ԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ԴԱՆԻԷԼ ԲԷԿ/ԻՆ ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆՑ, / Ի 1891 ԹՎԻՆ:

**37. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 6 տող (հիմնականում՝ բոլորգիր).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ / ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐԲԷԿ / ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆ⌊Ի⌋ , / 1884–1917: / ՈՐԴԻՆԵՐ՝ԼԵԻՈՆ, / ԱՍՅԱ ԵՒ ԱՆԱՀԻՏ:

**38.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 5 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՎԱՂԱԹԱՌԱՄ / ԴԱՆԻԷԼ ԲԷԿԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՅՕՍԷ/Փ ԲԷԿԻՆ՝ ՅԱԶԳԷՆ ՄԵԾԻՆ / ՃԱԼԱԼ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՍԱՆ / ՋԱԼԱԼԵԱՆՑ, Թ⌊ՎԻՆ⌋1850:

**39. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող.



ԱՍՏ ԱՆՓՈՓԻ ՄԱՐՄԻՆ ԳԻՒԼԻ/ԽԱՆՈՒՄԻՆ, ՈՐ ԷՐ ԿՈՂԱԿԻՑ ԱԲ/ՐԱՀԱՄ ԲԷԿ ՄԷԼԻՔ ԱԼԱՀՎԵՐԴԻԵԱՆ / ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆՑ⌊Ի⌋, ՎԱԽՃ⌊ԱՆԵՑԱ⌋Ի 1872:

**40.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՌՈՒԻՇԱՆԻՆ, / ՈՐ Է ՈՐԴԻ Ձ⸤Ի⸥ԼԱՎԻՆ ԵՒ ԵՏ ՇԻՆԵԼ ԻԻՐ ՈՐԴԻ ՍԱՆԻՆ, / ԹՎԻՆ 1863 ԱՄԻՆ:

**Ծանոթ.** Թվականի 3 միավորի փոխարեն գրվել է «Գ»:

**41. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 3 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄՈՒՍԱԷ/ԼԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՎԱՆԷՍԻՆ, / ԹՎ⸤ԻՆ⸥ ՌՅԿ (1911) ԱՄԻ:

**42.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 5 տող.



ՀԱՆԳԻՍՏ ՄԷԼԻՔ ԲԷԳԻՆ, / ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ԱԲՐԱՀԱՄԲԷ/ԳԻՆ՝ ՅԱՋԳԷՆ ՄԵԾՆ ՋԱԼԱԼ / ԴՕԼԼԻՆ Հ⸤ԱՍԱՆ⸥ ՋԱԼԱԼԵԱՆՑ, / ՎԱԽՃ⸤ԱՆԵ⸥Ց⸤ԱԻ⸥ 1851 Թ⸤ՎԻՆ⸥:

**43. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆԱՆԻՆ, / ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՄԱՐԳԱՐԻՆ, / ԿՈՂԱԳԻՑ ԷՐ ԱՌՈՒԻՇԱՆԻՆ / ԹՎ⸤ԻՆ⸥ 1869 ԱՄԻ:

**44. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 3 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՋԱԼԱԼ ԲԷԿԻՆ, / ՈՐ Է ՈՐԴԻ ԵՐԵՄՅԱ ՔԱՀԱՆԱԻՆ՝ / ՅԱՋԳԷՆ ՄԵԾՆ ԻՇԽԱՆԻՆ, 1881:

**45. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՒԱՆԷՍ ԲԷԿԻՆ՝ / ՈՐԴԻ ՅՈՍԷՓ ԲԷԿԻՆ՝ Ի ԱԶԳԷՆ / ՄԵԾԻՆ ՋԱԼԱԼ ԴՕԼԼԻՆ ՀԱՍԱՆ / ՋԱԼԱԼԵԱՆՑ, ՎԱԽ⌊ՃԱՆԵՑԱՒ⌋ 1892 Ա⌊ՄԻ⌋:

**46.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող (բոլորգիր).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՅՕՍԷՓ ԲԷԿԻՆ, / ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՄԷԼԻՔ ԱԼԱՀՎԵՐՏԻ⌊Ի⌋Ն՝ Ի ԱԶԳԷՆ / ՄԷԾԻ ՋԱԼԱԼԻՆ ՀԱՍԱՆ / ՋԱԼԱԼԵ⌊Ա⌋ՆՑ, / ՎԱԽՃԱՆԵՑ⌊ԱՒ⌋ 1858 ԹՎԻՆ:

**47. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 5 տող (բոլորգիր).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՎԱՂԱԹԱՌԱՄ / ԱԹԱՆԷՍ ԲԷԿԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՎԵ/ԼԻՃԱՆ ԲԷԿԻՆ, Ի ԱԶԳԷՆ ՄԷԾԻՆ / ՋԱԼԱԼԻ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՍԱՆ ՋԱ/ԼԱԼԵԱՆՑ, Թ⌊ՎԻՆ⌋ 1889:

**48.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող (բոլորգիր).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԵՂԻՍԱ/ՊԵՏԻՆ, ՈՐ ԷՐ ԿՈՂԱԿԻՑ ՅՈՍԷՓ ԲԷԿԻՆ / ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆՑ, / ՎԱԽՃԱՆԷՑ⌊Ա⌋Ի 1846:

**49.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 6 տող.



Ի ՍՄԻՆ ՏԱՊԱՆԻ ՀԱՆԳՉԻ ՄԱՐ/ՄԻՆ ՆՈՐԱՀԱՐՍ ԵՐԻԴԱՍԱՐՏ ՋԱ/ՔԱՐԱՅ ԲԷԿ⌊Ի⌋Ն ԱԲՐԱՀԱ/ՄԲԷԿԵԱՆ ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆՑ, / Ի 14 ՍԵՊ⌊ՏԵՄԲԵՐԻ⌋ 1822 / ԱՄ⌊Ի⌋:

**50. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 7 տող (հիմնականում՝ բոլորգիր).



ԱՍՏ ՀԱՆԳՉԻՆ ԻՄ ՋՕՅԳ ՋԱՒԱԿՈՒՆՔ, / ՄԵԾԸ՝ ՋԱՔԱՐԻԱՅ, ՓՈՔՐՆ՝ ԻՍՀԱԿ, / ԷԼ ԻՆՉՊԷՍ ՄԽԻԹԱՐԻԻ ԽԵՂՃ / ԱԼԱՀՎԵ⌊ՐԴ⌋Ի ԲԷԳ, ԵՐԲ ԻԻՐ ՎԱՂԱԹԱ/ՌԱՄ ՋԱՒԱԿՈՒՆՔ ԻԻՐ ԾԷՍՕՔ / ԸՆ⌈ԿԱՆԵԱԼ⌉ ՀՈՂԻ ՄԷՋ: / ՎԱԽՃԱՆԵՑԱՆ 1882:

**51. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող (բոլորգիր).



ՀԱՆԳԻՍՏ ԼՈՒՍԱՀՈԳԻ ՔՕԹԱՆԻՆ, / ԿԻՆ ԷՐ ԵՍԱՅԻ ԲԷԳ ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵ⌊ԱՆԻ⌋, / ՄԱՅՐ ԷՐ ՄՈՒՍԱՅԵԼ ԲԷԳԻՆ, ԱՎԱՆԷՍ / ԲԵԳԻՆ, ՎԱԽ⌊ՃԱՆԷՑԱ Ի⌋ 1908, 40 ԱՄԱՑ:

**52. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող.



ԱՋՆԻԻ ՏԱՊԱՆ⌈Ս⌉ ⌊Ե⌋ ՍԱՅ[Ե]Ի ԲԷԳԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐԴԻ / ԱՊՐԷՍ ԲԷԳԻՆ, ՀԱՅՐ ԷՐ ՄՈՒՍԱՅԵԼ ԲԷԳ, Ե⌊Ի⌋/ ԱԻԱՆԷՍ ԲԷԳ ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵ⌊Ա⌋ՆՑՆԵՐԻՆ, / ՎԱԽՃ⌊ԱՆԵ⌋Ց⌊ԱԻ⌋1883 Թ⌊ՎԻՆ⌋:

**53.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 8 տող (բոլորգիր).



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԹԱԲԷԿԻՆ, / ՈՐ Է ՈՐԴԻ ԴԱՆԻԷԼ ԲԵԿԻՆ՝ / ՅԱԶԳԷՆ ՄԵԾԻ ՋԱԼԱԼ ԻՇ/ԽԱՆԻՆ, ՎԱԽՃԱՆՈՒԵՑԱՒ / 1914 ԹՎԻՆ: ՅԻՇԱՏԱԿ Է / ԱՐԾԱՆՍ ԵՂԲԱՅՐ ԱՐՇԱԿ ԲԷԿԷՆ: ՏԵՍ⌊Ն⌊ՈՂ⌊Ս⌋[Ա] ՀԱՐԿԻ: / 50 Ա⌊ՄԵԱՅ⌋ՀԱՍԱԿՈՒՄ ԱՄՐԻ:

**Ծանոթ.** Վերջին՝ «ամր» բառը ծագում է արաբերեն «ումր» عمر = «տարիք» գոյականից (**Баранов**, 1977, 540):

**54.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 2 տող (ուղղահայաց և հորիզոնական գրությամբ).




ԱԽԷՋԱՆ⌊ԻՆ⌋՝ ԿԻՆ ՍԱԼՎԱՐԻՆ:

**Ծանոթ.** Տապանաքարին պատկերված են ամուսինները՝ իրար ձեռք բռնած: Կինը ձախ ձեռքում դեպի վեր պարզել է, կարծես, ջահ:

**55.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 2 տող .



ՀԱՆԳԻՍՏՆ Է / ՇԱԽԱՆՈՒՄ ԱԲՐԱՄԵԱՆԻ:

**56.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 2 տող .



+Ի ԱՄԻՆ ՏԱՊԱՆԻ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԱԲՐԱՀԱՄԻՆ, / ՈՐ Է ՈՐԴԻ ԱԻԱՔԻՆ: Ա̅Ծ̅ ԼՈՒՍԱԻՈՐԷ ՋՀՈԳԻՍ ՍՈՐԻՆ, 1856 ԱՄԻ:

**57. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 3 տող .



ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ ՌՈՒ⌊Ս⌋ ՏԱՄԻՆ, / ՈՐ Է ՈՐԴԻ ՍԱՅԻ ..., / 1871 ԱՄԻ:

**58.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող .



ԱՅՍ Է ՏԱՊԱՆՍ Ջ⌊Ա⌋ՆԻՆ, / ՈՐ Է ԿՈՂԱԳԻՑ ԱՐԱՄԻՆ, / ՄԱՅՐ ԷՐ ԱԼԱՀՎԵՐՏ⌊Ո⌋ԻՆ ԵՒ / ԱՌՍՏԱՄԻՆ, ԹՎ⌊ԻՆ⌋ 1872 ԱՄԻ:

**59.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 3 տող .



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՈՍԿԱՆԻՆ, ՈՐ Է / ՈՐԴԻ ՊՕՂՍԵՆԻՆ ԵՒ ԵՏ ՇԻՆԵԼ / ՈՐԴԻ ԻԻՐ ՆԱՐԻՄԱՆ, 1842 ԹՎ⌊ԻՆ⌋:

**60.ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող .



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆԱՐԻՄԱՆԻՆ, / ՈՐ Է ՈՐԴԻ ՈՍԿԱՆԻՆ, / ԵՂԲԱՅՐ ԷՐ ԱԻԵՏԻՍԻՆ, / ԹՎԻՆ 1871 ԱՄԻ:

**61. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 3 տող (բոլորգիր).



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՂԻՍԱԲԷԹԻՆ, / ՈՐ ԷՐ ԴՈՒՍՏՐ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԲԷԿ / Հ⌊ԱՍԱՆ⌋ ՋԱԼԱԼԵ⌊Ա⌋ՆՑԻՆ, Վ⌊Ա⌋ԽՃ⌊ԱՆԵՑԱՒ⌋ 1895:

**62. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող .



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳԷԼԻՆ, / ՈՐ Է ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԻ⌊Ւ⌋ՆԻՆ, / ՎԱԽՃԱՆՎԵՑ 1908 Թ⌊ՎԻՆ⌋:

**Ծանոթ.** Թվականի միավոր 8 նիշի փոխարեն գրվել է «Ը»:

**63. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 4 տող .



ԱՅՍ Է ՏԱՊԱՆՍ ՔԷՐՆԱՆԻՆ՝ / ԿՈՂԱԿԻՑ ՋԱԼԱԼ ԲԷԿԻՆ ՀԱ/ՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆՑԻՆ: ՅԻ/ՇԱՏԱԿ Է ԱՐՁԱՆՍ ԿՐՏՍԵՐ / ՈՐՏԻ ՄԱՐՏԻՐ⌊ՈՍ⌋ ԲԷԿ⌊Է⌋Ն, / Վ⌊Ա⌋ԽՃ⌊ԱՆ⌋Վ⌊Ե⌋Ց⌊ԱՒ⌋ 1899 ԹՎԻՆ, 68 ԱՄ⌊Ե⌋ԱՑ:

**64. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 3 տող (բոլորգիր).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏԸ ԱՎԱՆԷՍ / ԲԷԿԻՆ ԿԱՏԻՆԿԱ ՋԱԼԱԼԵԱՆԻ, / 1870–1926:

**65. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 5 տող .



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՈՒԼ⌊Ո⌋ՒԲԷԿԻՆ, / ՈՐ Է ՈՐԴԻ ԲԱԽԳԻ ԲԷԿԻՆ / ՀԱՍԱՆ ՃԱԼԱԼՕՎԻՆ, ՀԱՆ/ԴԻՊՕՂՄՆ ՄԱՂԹԷ ՈՂՈՐՄԻ, / 1884 ԱՄԻ:

**66. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, 7 տող .



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ / ԲԱԽԳԻ ԲԷԿԻՆ, / ՈՐ Է ՈՐԴԻ ՏԷՐ ԵՐԷՄԻՆ / ՀԱՍԱՆ ՃԱԼԱԼՕՎԻՆ, / ՀԱՆԴԻՊ/ՕՂՄՆ ՄԱՂԹԷ ՈՂՈՐՄԻ, / 1821 ԱՄԻ:



## Եզրակացություններ

Այսպիսով, շնորհիվ Տ. Բագրատ քահանա Ֆարիշյանի Գանձասարի վանքի վիմագրական հարուստ ժառանգությունը համալրվում է շուրջ յոթ տասնյակ վիմական արձանագրություններով, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են ոչ միայն այդ հռչակավոր մենաստանի, Հասան-Ջալալյան տոհմի, այլև Հայոց պատմության ուսումնասիրության համար:

**Տ. Բագրատ Ֆարիշյան** – գիտական հետաքրքրությունները՝ Հայ եկեղեցու պատմություն, Հայոց պատմություն, վանքերի, եկեղեցիների ուսումնասիրություն, վիմագրագիտություն:

**Աշոտ Մանուչարյան** – գիտական հետաքրքրությունները՝ վիմագրագիտություն, Միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն, պատմամշակութային հուշարձանների (վանքեր, եկեղեցիներ) ուսումնասիրություն: Հեղինակ է 8 գրքերի, գրքույկների (մի մասը՝ եռալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն), 90 գիտական հոդվածների և հրապարակումների:

## Օգտագործված գրականություն


1. **Աճառեան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Եր., 1944:
2. **Աջապահյան Միքայել վրդ.**, Նորահայտ արձանագրություններ և վիմագրական սրբագրումներ (Գանձասարի վանք), «Էջմիածին», 1990, Ը-Թ, էջ 54-57:
3. **Բարխուդարեանց Մակար եպս.**, Արցախ, Բագու, 1895:
4. Գանձասարայ եւ Հաւոցպտկոյ արձանագրութիւնք, ժողովեաց եւ ի լոյս ածելոյ պատրաստեաց Յովսէփ Օրբէլի, Պետրոգրադ, 1919:
5. Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Եր., 1982:

6. **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 1, Եր., 1986:
7. **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 2, Եր., 1988:
8. **Շահխաթունեանց Յովհ. եպս.**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. Բ, Ս. Էջմիածին, 1842:
9. **Ջալալեանց Սարգիս վրդ.**, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842:
10. **Ուլուբաբյան Բ.**, Գանձասար, Եր., 1981:
11. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002:
12. **Баранов Х. К.**, Арабско-русский словарь, М., 1977.
13. **Магалян А.**, Правители Хачена. Княжеский род Хасан-Джалалянов в XVII-XIX веках, «Армянская генеалогия», II, Москва-Ереван, 2023, с. 12-32.
14. **Орбели И.**, Надписи Гандзасара и hАвоцптука (собрал и подготовил к печати канд. ист. наук Айк Акопян), Ер., 2016.

## Bibliography (Latin Script)

1. **Ac"ar'yan Hr.**, Hayoc andz'anunneri bar'aran, h. II, Yer., 1944 (In Armenian).
2. **Ajapahyan M. vrd.**, Norahayt ardz'anagrut'yunner yev' vimagrakan srbagrumner (Gandzasari vanq), «Ejmiac'in», № 8-9, ej 54-57 (In Armenian).
3. **Baranov Kh. K.**, Arabsko-russkij slovar', M., 1977.
4. **Barxudareanc M. yeps.**, Arcax, Bagu, 1895 (In Armenian).
5. Divan hay vimagrut'yan, prak V, Arcax, kazmec S. Barxudaryan, Yer., 1982 (In Armenian).
6. Gandz'asaray yev' Havocptkoy ardz'anagrut'yunq, zh'ogh'oveac yev' i loys ac'eloy patrasteac Yovsep' Orbeli, Petrograd, 1919 (In Armenian).
7. **Hakobyan T'., Meliq-Baxsh'yan St., Barsegh'yan H.**, Hayastani yev' harakic shrjanneri bar'aran, hat. 1, Yer., 1986 (In Armenian).
8. **Hakobyan T', Meliq-Baxsh'yan St., Barsegh'yan H.**, Hayastani yev' harakic shrjanneri bar'aran, hat. 2, Yer., 1988 (In Armenian).
9. **Maghalyan A.**, Pravitjeli Xachjena. Knjazhjeskij rod Xasan-Dzhalaljanov v XVII-XIX vjekax, «Armjanskaja genjealogija», II, Moskva-Jerevan, 2023, ej 12-32 (In Russian).
10. **Jalaleanc S. vrd.**, C"anaparhordut'jun I mec'n Hayastan, masn I, Tp'gh'is, 1842 (In Armenian).
11. **Orbeli I.**, Nadpisi Gandzasara i hAvozptuka (sobral i podgotovil k pechati kand. ist. nauk Ayk Akopyan), Yer., 2016 (In Russian).
12. «Qristonya Hayastan» hanragitaran, Yer., 2002 (In Armenian)..
13. **Sh'ahxat'unyanc Yovh. ye'ps.**, Storagrut'yun Kat'ogh'ike Ejmiac'ni yev' hing gavaracn Araratay, hat. II, S. Ejmiac'in, 1842 (In Armenian).
14. **Ulubabyan B.**, Gandzasar, Yer., 1981 (In Armenian).